

Ա. Ա. Արահամյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԴԵՄՔԻ ՀԱՐՑԵՐ

I ԴԻՄԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒԹՅՈՒՆ

Բայական դեմքն իրրև քերականական կարգ սահմանելիս և նրա երեք տիպերը բնութագրելիս կատարվում է համապատասխան վերացարկում: Երբ նշում ենք, որ բայը խոնարհվելով արտահայտվում է երեք դեմքով, նկատի ենք ունենում խոսքի մեջ հանդես եկող բաղմաթիվ մասնակի զեպքերի հանրագումարից բխող ընդհանրությունները: Սակայն այդ ընդհանրությունների տեսանկյունից երբ դիտում ենք բայական բառային տարրեր միավորների դիմային կիրառությունները խոսքի մեջ, նկատում ենք որոշ իրողություններ, որոնք կապված լինելով այդ միավորների բառային իմաստների և քերականական որոշ նշանակությունների յուրահատկությունների հետ՝ լիովին չեն արտահայտում բայական դեմքի ընդհանրությունները:

Կենդանի խոսքում արտահայտվող դիմային կիրառությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ բայեր անխտիր երեք դեմքով չեն զործածվում: Քիչ չեն այնպիսի զեպքերը, երբ բայի բառային տվյալ իմաստով կամ քերականական տվյալ նշանակությամբ խոսողը (կամ զրողը) չի կարող իրեն, իր խոսակցին և մի երրորդի հավասարապես վերադրել զործողությունը, եղելությունը կամ զրությունը: Այստեղ խոսքը չի վերաբերում արտահայտվող խոսքի և իրականության բացահայտ հակասությանը (օրինակ, այնպիսի հակասությանը, երբ, ասենք, մեկը չի նկարում, բայց ասում ենք «նկարում է» և այլն), այլ այնպիսի յուրահատկությանը, երբ բայը իր բնորոշ իմաստով ու քերականական բնույթով այս կամ այն դեմքով սովորաբար չի զործածվում¹ կամ տվյալ դեմքում անսովոր է լինում, իսկ մի այլ դեմքում՝ սովորական: Այսպիսով բայերի դիմային զործածությունների մեջ երևան են գալիս անհավասարություն և սահմանափակություն:

1. Կան բայեր, որոնք ուղղակի իմաստով առաջին դեմքով զործածություն չունեն, քանի որ նրանց արտահայտած զործողությունը, եղելությունը կամ զրությունը այնպիսին են, որ ուղղակի առումով չեն կարող հանդես գալ իրրև խոսող (կամ զրող) անձի զործողություն, եղելություն կամ զրություն, ինչպես բուսանել, ծլել, հոսել, հորդել, կազմանալ, հաշել, կլանել, կարկաչել, խոխոջել, զննել և այլն, և այլն: Համապատասխան առարկաների զործողության, եղելության կամ զրության վերադրումով ազատ զործածություն ունի այս կարգի բայերի երրորդ դեմքը (չորրդ հոսում է, շունը հաշում է, դանդը զննում է և այլն): Խոսքի մեջ հատուկ պայմաններում խոսողը դիմելով այնպիսի առարկաների, որոնց բնորոշ են այդպիսի բայերով արտահայտվող հատկանիշները, նույնպես

¹ Հմմտ. «Грамматика русского языка, т. 1. Фонетика и морфология», изд. АН СССР, Москва, 1952, էջ 470—471.

կարող է այդ բայերն արտահայտել նաև երկրորդ դեմքով, սակայն ուղղակի նշանակությամբ երբեք չի կարող արտահայտել իր իսկ (առաջին) դեմքով:

Առաջին դեմքով այդպիսի բայերի գործածությունը կարող է լինել միայն փոխարերական նշանակությամբ ու հատուկ կիրառությամբ: Այդ յուրահատկությունները դիտելու համար համեմատենք նույն բայի դիմային տարբեր գործածությունները: Այսպես. վերցնելով բուսնել և ծաղկել բայերը իրենց բուն իմաստներով, առանց իմաստային երանգների ու այլ առումների՝ տեսնում ենք հետևյալը. «...Քոշաքարի ժեռուտ կատարին թռչկոտում է քոշը, և բուսնում ղանձիլ...» (Հ. Թումանյան, «Քաջերի կյանքից», II): «Օրանջիայի ձորակում ամեն գարնան մասրենիներն են ծաղկում...» (Ա. Բակունց, «Օրանջիա»): «Գեղեցիկ, հոտավետ, դու ծաղիկ լեռնային, Ո՞ւմ համար դու բուսաւ, ո՞ւմ համար ծաղկեցիր...» (Լ. Մանվելյան, «Վայրի ծաղիկ»): Բերված նախադասությունների մեջ բուսնել և ծաղկել բայերը գործածված են երկրորդ և երրորդ դեմքերով: Այդ գործածությունները բայերի տվյալ իմաստներով անսովոր չեն, բայերը հանդես են եկել իրենց ուղղակի իմաստներով: Բայց պետք է ասել, որ դրանց գործածությունը երրորդ դեմքով շատ ավելի է տարածված, քան երկրորդով: Հասկանալի է, որ իրը անձի հետ չի կարող իրական խոսակից լինել, բայց խոսող անձը երբեմն կարող է դիմել իրին, նրան հանդես բերել խոսակցի դերում և այդպիսով նրա գործողությունը, եղելությունը կամ դրությունը ներկայացնել երկրորդ դեմքով, ինչպես Լ. Մանվելյանից բերված մեր օրինակում է: Հեղինակը դիմում է ծաղկին, ասելով՝ «Ո՞ւմ համար դու բուսաւ, ո՞ւմ համար ծաղկեցիր»: Բուսնել և ծաղկել բայերով արտահայտված են ծաղկի համար շատ բնորոշ ու իրական բուսնելու և ծաղկելու հատկանիշները: Այդ բայերը այստեղ արտահայտված են ուղղակի իմաստով, թեև երկրորդ դեմքով են դրված: Դրա համար էլ նրանց այդ գործածությունը չենք համարում անբնական, անսովոր, չնայած տարածվածությամբ զիջում են երրորդ դեմքին:

Միանգամայն այլ է առաջին դեմքի հարցը: Առանց փոխարերական և նման այլ յուրահատուկ գործածության այս բայերը՝ տվյալ իմաստներով առաջին դեմքով չեն կարող արտահայտվել: Խոսքի մեջ հնարավոր է լինում սրանց առաջին դեմքի գործածությունը իրերի անձնավորման եղանակով (այդպես կլինի, եթե, ասենք, ծաղիկը ներկայացվի իրրե անձ և նրա «բերանով» ասվի՝ «ես ծաղկում եմ, ես բուսնում եմ...») կամ բուն փոխարերությամբ՝ իրերի այդ հատկանիշները անձերին վերադրելով (երբ մարդն ասի՝ «ես բուսնում եմ, ես ծաղկում եմ...»), կամ էլ յուրահատուկ համեմատությամբ (օրինակ, երբ ասվի՝ «Ես ծաղիկ հո չեմ, որ բուսնեմ ու ծաղկեմ» և այլն), իսկ այդպիսի գործածությունները այն չեն լինի, ինչ երկրորդ և երրորդ դեմքերում տեսանք: Այսպիսի համեմատությունը ակներևաբար ցույց է տալիս այս կարգի բայերի երկրորդ և երրորդ դեմքերի գործածության բնականությունը և առաջինի անբնականությունը:

2 Հասկանալի է, այստեղ խոսքը չի վերաբերում ծաղկել բայի ժառանգականության, ծաղկանկարով զարդարել իմաստին: Իսկ զգարգանալ իմաստն էլ փոխարերական է: Նույն հոդի վրա է գոյացել նաև ժառանգական հասակ առնել, ծաղկուն հասակով աճել իմաստային երանգավորումը, որը ասվում է անձի մասին, ուստի և ազատ կերպով կարող է հանգես գալ առաջին դեմքի գործածությամբ: Նկատի չունենք նաև բուսնել բայի ժանսպասելի կերպով երևալ իմաստային երանգը, որը նույնպես երկրորդական է:

Այստեղ գործ ունենք բայերի դիմային գործածության անհավասարության և սահմանափակության հետ:

Դիմային այսպիսի գործածություններից պետք է տարբերել ընդհանրապես փոխաբերական գործածությունները: Եթե հիշյալ կարգի բայերի առաջին դեմքի գործածությունը տվյալ իմաստներով հնարավոր է լինում միայն փոխաբերությամբ կամ ենթակայի անձնավորումով ու յուրահատուկ համեմատությամբ, ապա այդ չի նշանակում, թե ընդհանրապես միայն առաջին դեմքում է լինում բայերի փոխաբերական գործածությունը: Փոխաբերությունն իրրեւ այդպիսին լուրոր դեմքերում էլ կարող է լինել: Օրինակ՝ ծլել, հորդել, հոսել, կաղկանձել, հաշել, կլանել, կարկաշել, խիստել, զնգալ և նման ուրիշ շատ բայերից որն էլ որ հնարավոր լինի գործածել անձի անուն հաղիսացող ենթակայի համար իբրեւ ստորոգյալ, բոլոր դեմքերում էլ փոխաբերական իմաստով կարտահայտվի և, ընդհակառակն, այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ խորհել, մտածել, գիտակցել, գիտենալ, ամաշել, գնահատել, ասել, խոսել, հարցնել, պատասխանել, ժպտալ, ծիծաղել և այլն, իրի անուն հանդիսացող ենթակայի կարող են վերագրվել իբրեւ ստորոգյալներ միմիայն փոխաբերական իմաստով, ո՛ր դեմքով էլ արտահայտված լինեն: Հմտ. «...Տեսա՞ր նրա փողկապի ադամանդը, մուշտակը: Մենք այստեղ ցրտից կաղկանձում ենք, իսկ նա քրտինքն էր սրբում...» (Նար-Դոս, «Նեղ օրերից մեկը»): «էյ, աստղե՛ր, աստղե՛ր, երկնքի աշքեր, Որ այդպես վառ վառ ժպտում եմ պայծառ... Կծպտա՛մ նաև շիրիմիս վերեւ...» (Հ. Թումանյան, «Աստղերի հետ»): «Ինչո՞ւ ես լալիս, սիրուն տղա, — հարցրին ալիքները... — Օ՛հ, մի՛ հարցրեմ, պայծառ ալիքներ...» (Ավ. Իսահակյան, «Հեքիաթ»): «...Հեքիաթը անվերջ օրորում, Իլիկդ խոսում է անուշ» (Վ. Տերյան): «Ինձ չեմ հասկանա, մով մանուշակներ, Կապույտ ծաղիկներ, ինձ չեմ հասկանա» (Հ. Շիրազ) և այլն:

Ընդգծված բոլոր բայերը համապատասխան դեմքերով գործածված են ոճական ուրույն հնարներով, առանց որոնց անկարելի կլինեին դիմային այդպիսի կիրառությունները:

Եվ ընդհանրապես, առանց անձի և իրի տարբերակման, եթե մի առարկայի հատկանիշը բայ-ստորոգյալի միջոցով (տվյալ դեպքում) վերագրվում է մի այլ առարկայի, որը չունի այդ հատկանիշը, պարզ է, որ բայը որ դեմքով էլ լինի, ստանում է փոխաբերական գործածություն: Մեր նպատակը չէ, սակայն, այստեղ քննարկել ընդհանրապես բայերի փոխաբերական գործածությունները: Այս հարցը ծագեց դիմային սահմանափակության և անհավասարության շոշափման առիթով:

2. Եթե վերը նշված բայերի մեջ դիմային գործածության սահմանափակությունը և անհավասարությունը կապված են նրանց բառական իմաստների յուրահատկության հետ, ապա մի շարք բայաձևերի մեջ էլ դրանք պայմանավորված են քերականական յուրահատուկ նշանակությամբ: Ժամանակակից գրական հայերենում այդ երևույթները հող են գտնում կրավորական սեռի քերականական նշանակության մեջ: Նշենք նաև, որ դրանք կրավորական սեռով արտահայտվող բոլոր բայերում ընդհանուր բնույթ չունեն, երևան են գալիս այդպիսիների մի մասում:

Մի շարք ներգործական և դրանց համապատասխան կրավորական սեռի բայերի դիմային գործածությունների զուգադրումը ցայտուն կերպով երևան է հանում առաջինների հանդեպ մյուսների դիմային գործածության անհավասարակազմությունը:

բուխներն ու սահմանափակությունը՝ Նիկե ներդրածական սեռի բայը արտահայտելով համապատասխան առարկայի փոփոխվող հատկանիշը՝ ազատ կերպով դրվում է բոլոր դեմքերով, ապա նույն բայը կրավորական սեռով դիմային նույնպիսի ազատ գործածությամբ կարող է հանդես չգալ։ Դա կապված է գործողության իրական կատարման հնարավորության հետ։ Իրրե օրինակ՝ վերցնենք մի քանի այդպիսի բայեր։ Խմել, հերկել, քաղհանել, կալսել, նախագծել, նյութել, տոնել և այլն։ Սրանք իրենց բուն ներդրածական նշանակությամբ ազատ գործածություն ունեն բոլոր դեմքերում, իրրե անձ նշանակող ենթակաների ստորոգյալներ, քանի որ կարող են խոսքի մեջ դրսևորել թե՛ խոսողի, թե՛ խոսակցի և թե՛ խոսելու գործողությունը շմասնակցող, բայց խոսքի մեջ հիշատակվող այլ առարկայի գործողությունը, ինչպես՝ խմում եմ, խմում ես, խմում է, հերկում եմ, հերկում ես, հերկում է, կալսում եմ, կալսում ես, կալսում է, նյութում եմ, նյութում ես, նյութում է և այսպես էլ մյուսները, իսկ իր նշանակող ենթակաների հետ ուղղակի իմաստով գործածվելիս ունեն դիմային սահմանափակումներ։ Սակայն այլ է պատկերը հենց նույն բայերի փրականական ածանցումով ստացվող կրավորական սեռի դիմային գործածությունների մեջ։ Ըստ համապատասխան կիրառությունների այս կարգի բայերը կրավորական սեռով ազատ գործածություն ունեն երրորդ դեմքում, ինչպես՝ խմվում է, կալսվում է, հերկվում է, քաղհանվում է, նախագծվում է, նյութվում է, տոնվում է և այլն։ Երկրորդ դեմքում սրանց կիրառությունն զգալի չափով սահմանափակվում է։ Ինչպես նախորդ կետում հիշատակված բայերի մասին ասվեց, սրանք էլ այս դեմքում իրենց ուղղակի իմաստներով գործածություն են ստանում այն ժամանակ, երբ խոսողը դիմում է համապատասխան իրին և նրան հանդես է բերում խոսակցի դերում ու նրա վրա անցնող գործողությունը խոսքի մեջ ներկայացնում է խոսակցի դեմքով։ Որինակ՝ «Սրանչևի շենք, արդյոք ո՞ր ճարտարապետի ձեռքով ես նախագծվել դու», «Հարազատ իմ հող, դարեր շարունակ դու հեղկվել ես աշխատավոր մարդու ձեռքով» և այլն։ Դիմային այսպիսի գործածություններն էլ թեև անսովոր չեն, սակայն սահմանափակ են։ Այս տիպի բայաձևերի առաջին դեմքի կիրառությունն անսովոր է, այն հնարավոր է միայն փոխարկությամբ, ենթակայի անձնավորումով կամ յուրահատուկ համեմատությամբ։ Անձ նշանակող ենթակայի հետ այսպիսի կրավորական բայաձևերը ուղղակի իմաստով չեն կարող գործածվել առհասարակ բոլոր դեմքերում։

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում ես գործ ունենք դիմային գործածության անհավասարության և սահմանափակության երևույթների հետ։

Սրանց հետ միասին կարելի է ցույց տալ նաև կրավորական սեռի այնպիսի բայաձևեր, որոնք համապատասխան ներդրածական սեռի հանդեպ դիմային գործածության սահմանափակություն կամ անհավասարություն չունեն անձ նշանակող ենթակայի մոտ, ինչպես՝ խրախուսվել, ծաղրվել, ծեծվել, հարգվել, հրավիրվել, մեծարվել, պարգևատրվել, սիրվել և ուրիշ շատերը։ Սրանցից որն էլ որ վերցնենք, բոլոր դեմքերում ազատ գործածություն կունենա, օրինակ՝ հարգվում եմ, հարգվում ես, հարգվում է, սիրվում եմ, սիրվում ես, սիրվում է և այլն։ Իսկ դա բացատրվում է նրանով, իր այսպիսի բայերը ինչպես ներդրածական, նույնպես և կրավորական սեռով ազատ կերպով կարող են արտահայտել թե՛ խոսողին, թե՛ խոսակցին և թե՛ մի այլ առարկայի վերաբերող գործողության զաղափար, ներդրածականի դեպքում՝ իրրե խոսողի, խոսակցի ու նրանց կողմում հանդես եկող անհատների և խոսողությանը շմասնակցող այլ

առարկաների զործողություն, իսկ կրավորական սեռի ղեպքում՝ իրրև նրանց վրա անցնող ուրիշի զործողություն (հարգում եմ || հարգվում եմ, հարգում ենք || հարգվում ենք, հարգում ես || հարգվում ես, հարգում եք || հարգվում եք, հարգում է || հարգվում է, հարգում են || հարգվում են և այլն)։

Այդ ազատ զործածությունները վերաբերում են այն ղեպքերին, երբ տվյալ բայերը իրրև ստորոգյալ հանգես են դալիս անձ նշանակող ենթակայի մոտ, իսկ իր ցույց տվող ենթակայի մոտ ունենում են դիմային այնպիսի սահմանափակումներ ու անհավասարություններ, որոնց մասին նշվեց վերը։

Երբ այս կարգի կրավորական բայաձևերը համեմատում ենք նախորդների հետ՝ ա) ավելի են ընդգծվում նախորդների դիմային զործածության անհավասարությունն ու սահմանափակությունը, բ) պարզ է դառնում, որ դիմային զործածության անհավասարությունն ու սահմանափակությունը ընդհանուր օրինաչափություն չեն կրավորական սեռի բոլոր բայաձևերի համար։

Այսպիսով՝

1. Բայական ղեմքի բերականական կարգը իր երեք տեսակներով լինելով ընդհանրացման արդյունք՝ կիրառական հանգամանքներում երևան է բերում դրսևորումների տարբերություններ։ Ըստ կիրառական կոնկրետ ղեպքերի դիմային լիակատար դրսևորումների հետ լինում են նաև սահմանափակումներ ու անհավասարություն։

2. Դեմքերի կիրառության անհավասարության ու սահմանափակումների երևույթները դիտվում են բայերի՝ ուղղակի իմաստով զործածվելու տեսանկյունից. դրանք նույն պատկերը չունեն փոխարկական զործածությունների մեջ, քանի որ նման ղեպքերում ոճական զանազան միջոցներով հնարավոր է լինում վերացնել կիրառական այդպիսի տարբերությունները։

3. Ուղղակի իմաստներով բայերի դիմավոր ձևերը փորձածելիս հանգես եկող դիմային անհավասարության ու սահմանափակումների երևույթները կախված են լինում որոշ զործոններից։ Դրանք են՝ ա) բայի բառական իմաստը, ս) ենթակայի՝ անձ կամ իր նշանակելը և ընդհանրապես նրա բառական իմաստը, դ) ներգործական բայերի և նրանց կրավորական բայաձևերի սեռային հակադրությունը։

II ՄԻԱԴԻՄԻ (ԳԻՄԱԶՈՒՐԿ) ԲԱՅԵՐ ԵՎ ԲԱՅԵՐԻ ՄԻԱԴԻՄԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քերականագիտությունը բայի դիմավոր ձևերի մեջ տարբերում է միադիմի կամ դիմադուրկ բայերը, որոնք ըստ ձևի արտահայտվում են եզակի երրորդ ղեմքով և իմաստային տեսակետից չեն ունենում որոշակի հարաբերություն զործող կամ եզող առարկայի նկատմամբ, քանի որ հանգես չեն դալիս իրրև որոշակի զործող կամ եզող առարկայի զործողություն, եղելություն կամ դրություն։ Քերականական նշանակության այս հիմունքով էլ նրանք դիտվում են իրրև դիմադուրկ բայեր։ Ժամանակակից շատ լեզուներ ունեն այդպիսի բայեր, դրանցով առանձնապես հարուստ է ժամանակակից ռուսերենը։ Ժամանակակից ռուսերենի այդ կարգի բայերը բաղմակողմանի քննության են ենթարկվել խոշոր ուսագետների՝ Ֆ. Բ. Բուսլանի, Ա. Ա. Պոտերյայի, Դ. Ն. Օվսյանիկով-Կուլիովսկու, Ա. Ա. Շախմատովի, Ա. Մ. Պեշկովսկու, Վ. Վ. Վինոգրադովի, Ե. Մ.

Գալիկինա-Ֆեդորուկի և ուրիշ շատերի կողմից: Էլ չենք խոսում այն մասին, որ դրանք դիտվել են դեռ Մ. Սմոտրիցկու ժամանակներից:

Ծիշտ է, ժամանակակից արևելահայ գրական լեզուն աչքի չի ընկնում այդպիսի բայերի ճոխությունը, սակայն եղածը պետք է ուսումնասիրվի: Այդպիսի բայերով համեմատաբար հարուստ էր գրարարը, որին վերաբերող քերականագիտական աշխատություններում պատշաճ տեղ է հատկացված դրանց ուսումնասիրությանը: Ժամանակակից արևելահայ գրական լեզվում գործածվող միադիմի բայերը գրարարի նույնպիսի բայերի համեմատությամբ ունեն ընդհանրություններ, սակայն առավել աչքի են ընկնում տարբերությունները: Գրարարի շատ միադիմի բայեր ոչ միայն իրենց գոյությունը, այլև շարահյուսական դերով նախադասության կառուցվածքի մեջ ցուցաբերվող քերականական ուրույն կապակցություններով շատ յուրահատուկ են և տարբեր աշխարհարարից: Սակայն այս հարցը որքան էլ հետաքրքրական է, տվյալ դեպքում դուրս է մեր նպատակադրման սահմաններից:

Արևելահայ գրական լեզվի քերականագիտության մեջ դիտողություններ կան միադիմի կամ դիմազուրկ կամ անդեմ բայերի մասին: Ստ. Պալասանյանը տարբերել է բուն և «պատահական» անդեմ բայեր: Նա գրել է՝ «1. Բուն անդեմ են այն բայերը, որ միայն եզ. երրորդ դեմք ունին. ինչպես՝ պետք է, հարկ է, բաւ է, հերիք է, մեղք է և այլն: 2. Պատահական անդեմ կոչվում են այն դիմառոր բայերը, որոնք առանձին մտքով վարվում են իրրև անդեմ. այդպես են ընթերցան երևոյթները և կենդանիների ձայները. ամպել, անձրևել, որոտալ, փայլատակել, մլաւել, բառանչել, մոնչել, զուալ: Բայց նմանութեամբ կարող են ամլն դեմքերով գործածուիլ: Կան շեղոք և մանաւանդ կրաւ. բայեր, ոյւ անդեմի մըտքով վարվում են. այսպէս են՝ երևում է, թվում է, մնում է, հետևում է, ասվում է, լսվում է, կարծվում է»³: Այսպիսի բաժանումը օրինակների մասնակի փոփոխություններով և միադեմ, միադիմի կամ դիմազուրկ անվանումներով ընդունում են նաև արևելահայ աշխարհարարի հաջորդ քերականները, որոնք հետևում են այս քերականին:

Մ. Աբեղյանը հանդես է բերում տարբեր մոտեցում. նա կտրականապես մերժում է անդեմ կամ դիմազուրկ անվանումները և, բացի դրանից, խիստ սահմանափակում է միադիմի բայի հասկացությունը: Նա գրում է՝ «Անդեմ կամ դիմազուրկ կոչումը սխալ է, որովհետև առանց դեմքի բայ չկա:— Հայերէնի միադիմի բայերը միայն շեղոք բայերից կազմուած կրաւորականներն են, որոնք ունին միայն եզակի երրորդ դեմք»⁴: Այսպիսի մոտեցումը նախ ընդունում է բայի մասին հեղինակի ունեցած այն յուրահատուկ պատկերացումից, թե՛ «Բայ կոչւում են այն բառերը, որոնք մենակ խօսք (այսինքն նախադասություն— Ա. Ա.) են կազմում, որովհետև մի անգամից մի բառով յայտնում են երեք զաղափար՝ բայիմաստ, դեմք և դեմքի թիւ»⁵: Այսինքն ըստ նրան բայ են միայն դիմազուրկ ձևերը: Սակայն սրանով էլ չի արդարանում և այն, որ միադիմի բայերի մեջ ընդունում է «միայն շեղոք բայերից կազմուած կրաւորականները»: Մանավանդ անդեմ կամ դիմազուրկ անվանումները մերժելու դեպքում պետք է որ այսպիսի սահմանափակում չմտցվեր այդ տիպի բայերի մեջ:

³ Ստ. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 175:

⁴ Մ. Աբեղյան, Աշխարհարարի շարահյուսութիւն, Վաղարշապատ, 1912, էջ 16:

⁵ Մ. Աբեղյան, Աշխարհարարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 43:

Միադիմի բայերի և բայերի միադիմի գործածությունների քերականական ընդթիվող դիտելիս ու արժեքավորելիս, բնականաբար, պետք է ելնենք բայական դեմքի քերականական կարգի որոշման հիմունքից, այսինքն տվյալ բայական արտահայտվող գործողության կամ եղելության և գործող կամ եղող առարկայի ու խոսողի հարաբերությունից: Նշանակության տեսակետից միադիմի բայերի մեջ դիմային այդպիսի հարաբերության որոշակիություն չկա, սակայն անժխտելի իրողություն է, որ այդ բայերը ունենում են եղակի երրորդ դեմքի ձևավորում: Այստեղ քերականական ձևի և նշանակության լիակատար համապատասխանություն չկա: Սակայն հարց է առաջանում՝ դա կարելի՞ է դիտել որպես լիակատար անդիմություն: Մեզ թվում է, որ մանավանդ ժամանակակից հայերենի ընձեռած փաստերի հիման վրա անդիմությունը պետք է ընդունել որոշ պայմանականությամբ: Դրանում համոզվելու համար պետք է հիշենք ամենից առաջ խոսքի մեջ բայական բառույթների կիրառությունների երկու հիմնական՝ դիմավոր և դերբայական տիպերը: Դերբայներն ինքնին վերցված շունեն դիմային ձևավորում և դիմային նշանակություն: Այստեղ անդիմությունը լիակատար է թե՛ ըստ ձևի, թե՛ ըստ նշանակության: Խոսք չի կարող լինել դերբայների և միադիմի բայերի համադրության մասին թեկուզ հենց միայն դիմային հատկանիշի տեսակետից: Միադիմի բայերը արտահայտվելով եղակի երրորդ դեմքի ձևով՝ համապատասխան բաղադրյալ ժամանակներում իրենց կազմում ունենում են այս կամ այն դերբայական ձևը (ինչպես՝ լուսանում է, լուսացել էր, ամպել է և այլն), ուստի նման դեպքերում դերբայը պարունակվում է միադիմի բայաձևի մեջ, հետևաբար վերջինս ավելին է, քան դերբայը: Այս իրողության նշումով, իհարկե, հարցը շոշափվում է մասնակի չափով, քանի որ միադիմի բայերն արտահայտվում են ոչ միայն բաղադրյալ, այլև պարզ ժամանակներով (ինչպես՝ լուսացավ, լուսանա, ամպեց, մթնի, կմթնի և այլն):

Բոլոր դեպքերում միադիմի բայերն ունենում են դիմային ձևավորում, ինչպես նշվեց, արտահայտվում են եղակի երրորդ դեմքով: Դա մեզ իրավունք է վերապահում խոսքի մեջ բայերի դրսևորման վերոհիշյալ խմբավորումները կատարելիս միադիմի բայերը վերցնել ոչ թե դերբայական, այլ դիմավոր ձևերի մեջ՝ իհարկե, չմոռանալով նրանց քերականական յուրահատկությունները:

Նշանավոր քերականագետ Ա. Մ. Պեշկովսկին շոշափելով ուսաց լեզվի безличный կոչվող բայերի դիմային նշանակության հարցը՝ գրում է. «Եվ իսկապես, խորամուխ լինելով դիմադուրկ բայերի նշանակության մեջ՝ այնուամենայնիվ մենք կրացահայտենք նրանց մեջ երրորդ դեմքի հետքերը: Լուսանում է (светает) արտահայտության մեջ որքան էլ մտքից վերացած լինի լույս առաջ բերողը, այն համենայն դեպս թաքնված չի թվում իմ կամ այն մարդու մեջ, որի հետ ես խոսում եմ, այլ հակառակը՝ կարող է և պետք է թաքնված լինի ինչ-որ տեղ, մեր երկուսից դուրս: Լուսանում է՝ անհայտ է՝ ո՞վ (և նույնիսկ հենց ո՞վ հարցը անհնարին է), բայց համենայն դեպս այդ ոչ ես եմ, ոչ դու: Դրան է հանգեցնում նաև այդ ձևի գոտ ձևարանական վերլուծությունը. լուսանում է համենայն դեպս ավելի շուտ կարող է զուգորդվել աշխատում է (работает), գրում է (пишет), կարդում է (читает), քան աշխատում եմ (работаю), աշխատում ես (работаешь), աշխատում ենք (работаем) և այլ ձևերի հետ: Պարզ է՝ քանի որ դեմքը ընդհանրապես պետք է մտածվի բայի մեջ, այն այստեղ մտածվում է իբրև երրորդ (դեմք): Բայց այն մտածվում է նվազագույն պարզությամբ: Հետաքրքրական է նույնպես զուգորդել դիմադուրկ բայը անորոշ

ղերբայի հետ՝ լուսանում է և լուսանալ (светает и светать), մրնում է և մրնել (смеркается и смеркаться)... Անորոշ ղերբայի համեմատությամբ ղիմադուրկ բայի մեջ գիտակցվում է ղեմքի նման ինչ-որ մի բան։ Անորոշ ղերբայը բոլորովին ղիմադուրկ է, կամ ավելի լավ է ասել՝ «արտաղիմային է»։ Իսկ ղիմադուրկ բայի մեջ կա ղեմքի որոշ միներմում, ղեմքի որոշ ակնարկ»⁶։

Ուսումնասիրելով միաղիմի բայերը՝ դժվար է համոզվել, որ նրանց մեջ ղեմքի քերականական կարգը պերազանցապես ձևային է, իսկ իմաստն էլ խիստ տարտամ է և շարահյուսական տարրեր հանգամանքներում տարբեր լինելով ունի։

Այստեղից ելնելով՝ որոշակիորեն պետք է տարբերել ձևային միաղիմությունը և իմաստալի ղիմադրկությունը կամ տարտամությունը վերը նկարագրված ղիմային անհավասարությունից։ Դիմային անհավասար գործածություն ունեցող բայերի՝ երրորդ պեմքով առավել տարածված լինելը իրեն քերականական երևույթ ղիմային նշանակության տեսակետից միանգամայն տարբերվում է ձևային միաղիմությունից։ Այդ տարբերությունն արտահայտվում է թե՛ ձևով, թե՛ նշանակությամբ։ Եթե նույնիսկ անտեսենք ղիմային անհավասարություն և սահմանափակություն ունեցող բայերի՝ ուղղակի իմաստի երկրորդ ղեմքի գործածությունները ու վերջնենք միայն երրորդ ղեմքը, ապա կտեսնենք, որ՝ ա) նրանք արտահայտվում են թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով՝ բուսնում է՝ են, ծաղկում է՝ են, հոսում է՝ են, հաշում է՝ են, զնգում է՝ են և այլն, բ) նշանակության տեսակետից նրանց ղեմքը շատ որոշակի է լինում, քանի որ նրանք հանդես են գալիս իբրև համապատասխան առարկաների գործողության կամ եղելության արտահայտիչներ, այնպիսի առարկաների, որոնք ներկայանում են ղիմային երրորդ կողմում, ինչպես՝ ծաղիկը բուսնում է, ծաղկում է, ծաղիկները բուսնում են, ծաղկում են, ջուրը հոսում է, ջրերը հոսում են, շունը հաշում է, շները հաշում են, զանգը զնգում է, զանգերը զնգում են և այլն։ Այսպիսի բայերով արտահայտված ստորոգյալներ ունեցող նախադասությունների մեջ, եթե այս կամ այն պատճառով ենթական չի արտահայտվում, ապա այդ դեպքում էլ պարզ կերպով զգացվում է. որ տվյալ բայով արտահայտվող գործողությունը կամ եղելությունը մի առարկայի (կամ առարկաների) գործելու կամ լինելու արդյունք է։ Դրանք ղիմավոր բայեր են թե՛ ըստ ձևի, թե՛ ըստ նշանակության։

Այստեղից ելնելով՝ հաստատ կարող ենք ասել, որ Ստ. Պալասանյանի հիշատակած բայերի մի մասը, «որոնք առանձին մտքով վարվում են իրեն անդէմ», իրականում այդպիսիք չեն, ինչպիսի կիրառություն էլ որ ունենան. դրանք են՝ մլավել, բառալել, մոնչալ (ըստ Պալասանյանի՝ բառանչել, մոնչել), զուալ։ Դրանք պետք է դիտել ոչ թե որպես «անդէմ», այլ՝ ղիմային անհավասարություն ու սահմանափակություն ունեցող բայեր, քանի որ իրականորեն առարկաների փոփոխական հատկանիշներ են արտահայտում՝ մլավում է (կատուն), բառաչում է (կովը, եղը և այլն), մոնչում է (առյուծը, վագրը և այլն), զոում է (էջը)։ Այս բայերը բառական կամ քերականական-կիրառական և ոչ մի յուրահատկությամբ խոնարհված ձևով չեն կարող հանդես գալ առանց ղիմային նշանակության։ Սրանք էլ ըստ կիրառության կարող են արտահայտվել նաև հոգնակի թվով։

Այս կարգի բայերից ղիմային տեսակետից տարբերվում են ձևային միա-

⁶ А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, Москва, 1956, стр. 343.

դիմի կամ որպես այդպիսին գործածվող բայերը իրենց այն հատկանիշներով, որ արտահայտվում են՝ ա) եզակի երրորդ դեմքով, բ) դեմքի նշանակության խիստ տարտամոլությամբ կամ գրեթե բացակայությամբ:

Սակայն հարց է ծագում՝ ինչու՞ անսլայման սրանք եզակի երրորդ դեմքի ձևավորում են ունենում: Այս հարցը անմիջականորեն կապվում է այսպիսի բայերի առաջացման հետ: Գիտական գրականության մեջ հատկապես այսպես կոչված դիմազուրկ նախադասությունների առաջացման քննարկման առիթով քննարկվել է նաև այսպիսի բայերի առաջացման հարցը: Հայտնվել են բազմազան կարծիքներ⁷. զրանց հիշատակումը չհամարելով մեր խնդիրը՝ նշենք միայն այն տեսակետը, որը ընդունելի է և կարևոր նաև ժամանակակից արևելահայ աշխարհարարին վերաբերող համապատասխան հարցի պարզարանման համար: Ռուսերենի քերականության մեջ այժմ ընդունված է այն ճիշտ տեսակետը, ըստ որի դիմազուրկ բայերը (безличны́е глаголы) առաջացել են դիմավոր բայերից: Դեռ մեծատաղանդ գիտնական Ա. Ա. Պոտերնյան իր «Из записок по русской грамматике» հոշակավոր աշխատության մեջ գիտականորեն քննարկելով безличны́й անվանումն ունեցող նախադասությունների մի շարք տիպերի առաջացումը՝ գիտական մեծ համոզականությամբ ցույց է տվել, որ նրանք առաջացել են դիմավոր նախադասություններից՝ ենթակայի վերացումով: Պարզ է, որ այդ դեպքում իրրև ստորոգյալ հանգես եկող բայերն էլ դիմավորից դարձել են դիմազուրկ (մեր անվանումով՝ միադիմի): Սովետական լեզվաբանությունը Ա. Ա. Պոտերնյայի բազմաթիվ արժեքավոր տեսակետների հետ ընդունում է նաև այս տեսակետը: Այսպիսի տեսակետը շատ կարևոր է նաև արևելահայ աշխարհարարի միադիմի (դիմազուրկ) բայերի ուսումնասիրության համար: Այդպիսի բայերը, իհարկե, հանդես են եկել ոչ ամեն տիպի ենթակայի վերացման միջոցով: Որոշ բայեր համապատասխան նախադասությունների մեջ ունեցել են բնությանը վերաբերող, միֆական կամ այլ բնույթի առարկաների ու հասկացությունների անուն հանդիսացող ենթականեր, որոնց նախնական պատկերացմամբ՝ վերագրվել են գործողության, եղելության հատկանիշներ, իրրև եզակի ըմբռնվող այդ ենթակաների ստորոգյալներ: Երբ այդ կարգի ենթակաները վերանում են կամ հեռանում են այդ ստորոգյալներից այն աստիճանի, որ այդ ստորոգյալները չեն ըմբռնվում իրրև տվյալ առարկաների հատկանիշների արտահայտիչներ, երբ մարդը զրանցով արտահայտվող գործողությունը, եղելությունը չի մտածում իրրև հատկապես տվյալ առարկաների գործելու կամ լինելու արդյունք, առաջ է գալիս խզում առարկայի և նրան երբեմնի վերագրված գործողության, եղելության միջև, բայը մնում է անկախ, բայց նախկին արտահայտությամբ՝ եզակի երրորդ դեմքով:

Բայց սխալ կլիներ կարծել, թե այդպիսի բոլոր բայերը անխտիր ձևավորվել են այդ ճանապարհով: Դա սխալ կլիներ մանավանդ ժամանակակից լեզուների համար, որտեղ կան և այնպիսի միադիմի (դիմազուրկ) բայեր, որոնք հնից չեն գալիս: Բանն այն է, որ հնից եկող մի շարք բայեր առանձնացել ու ձևավորվել են հիշյալ ճանապարհով, իսկ հետագայում քերականական նմանակությամբ գոյացել են և ուրիշները, բայց և հնում եղած որոշ բայեր էլ չեն հարատևել ու գործածությունից դուրս են ընկել: Սա առավելապես վերաբերում

⁷ Այդ խնդրի վերաբերյալ գիտական գրականության շատ լավ տեսություն է տրված պրոֆ. դր. Ս. Մ. Գալկինա-Ֆեդորուկի «Безличные предложения в современном русском языке» նշանավոր աշխատության մեջ (Մոսկվա, 1958, էջ 40—94):

է ժամանակակից հայերենին, որտեղ բայերի միադիմի գործածությունների մեջ, ինչպես կտեսնենք, շատ պայմանականություն կա:

Ժամանակակից արևելահայ աշխարհարարում միադիմի և որպես այդպիսին գործածվող բայերը լիակատար չափով չեն կղզիանում միայն իրենց բառական իմաստներով, այստեղ մեծ դեր են խաղում նաև քերականական հատկանիշները, քերականական յուրահատուկ կիրառությունները:

Ընդհանուր գծերով կարելի է մատնացույց անել միադիմի բայերի հետևյալ խմբերն ու գործածության դեպքերը ժամանակակից գրական հայերենում:

1. Բայեր, որոնց արտահայտած իմաստները կապվում են բնության զանազան երևույթների հետ. դրանք կարող են վերաբերել օրվա տարրեր պահելին, տարվա եղանակներին, միջնորոտին, ինչպես՝ ամպել, անձրևել, երեկոյանալ // իրիկնանալ, լուսանալ, ձյունել, մթնել, ցրտել, այլև բարբառային երանգով՝ աշունքանալ, դարունքանալ, ծեղել և այլն: Իրրև միադիմի բայեր առավելապես տարրերովում են կիրառությունների մեջ՝ հանդես գալով անենթականախաղասությունների մի յուրահատուկ տիպի մեջ՝ ստորոգյալի պաշտոնով: Օրինակներ. «Մի՞թե արդեն լուսացել է, և նա դեռ անքուն է» (Շիրվանզադե, «Քառոս», 3-րդ մ., V): «Հեռների վրա ձյունել է բարակ, Ուր, կարծես, իրենց փետուրը քնքույշ, նետել են զաղթող հավքերը ճերմակ...» (Ավ. Իսահակյան, «Ծառերի վրա աշունը դալուկ...»): «Ծա կանգնած էի տախտակամածի վրա, արդեն մքնում էր, և հանկարծ ինձ այնպես մենակ զգացի, մենակ այդ հսկա ծովում» (Մ. Մանվելյան, «Ապիտակ ծաղիկներ»): «Լուսանում է. լեռան հետևից ելնում է արևը...» (Ա. Բակունց, «Բրուտի տղան»): «Երբ ցրտում է, կամ խոնավ է գետինը, նուշիկը ներս է մտնում, մրսած մատները զոզնոցի տակ» (նույն տեղ): «Իրիկնացավ: Նույն ճանապարհով, վրանների կողմն էր բարձրանում մի մարդ...» (նույնը, «Ալպիական մանուշակ»): «Միայն թե շտապեցեք, արդեն երեկոյանում է...» (Մ. Արմեն, «Ցասվա», I, 4): «Արդեն երեկոյանում էր, երբ Միքայելը հասավ հրշեջ պաշտպանության աշտարակին» (նույն տեղ, II, 6): «Արդեն ցրտել էր, առավոտները երկինքը կանաչների վրա եղյամ էր դնում» (Վ. Անանյան, «Հովազաձորի գերիները», XVII): «Մի տեսակ գորշ դիշեր էր, կարծես արևը վաղուց մայր էր մտել, բայց դեռ չէր մթնել» (նույն տեղ, XVIII): «Որ զարուհեացավ, կացինը գոտիկս խրեցի, հրացանս փիզս գցեցի եկա...» (նույնը, «Որսորդի սիրտը»): «Երբ նա արթնացավ, արդեն ծեղում էր» (Ս. Խանդավյան, «Հողը», 1-ին մ., գլ. 5-րդ, I): «Ամպել է, ձյուն չի գալիս...» (Ժող. երգ): «Անձրևում է» և այլն:

Ինչպես տեսնում ենք, ընդգծված բայերն արտահայտված են տարրեր ժամանակներով, սակայն ընդհանուր են նրանով, որ միայն եզակի երրորդ դեմքի ձևավորում ունեն: Նրանց դիմային նշանակությունը խիստ տարտամ է: Լինելով ստորոգյալներ՝ չունեն համապատասխան ենթականեր. այստեղ դիմային վերադրումը ըստ նշանակության թաքնված է հենց իր իսկ՝ բայ-ստորոգյալի ներսում՝ իրրև երրորդ դեմքի նշանակության հեռավոր ակնարկ:

Բայց պետք է ասել, որ ժամանակակից հայերենում այս բայերը վերջնականապես կղզիացած ձևեր չեն: Նրանք համապատասխան շարահյուսական կիրառությամբ կարող են հանդես գալ հենց այդ դեմքի ցայտուն նշանակությամբ՝ իրրև որոշակի ենթակայի ստորոգյալներ: Ահա մի քանի օրինակներ. «Երկինքը ամպել է, գետինը թաց է...» (Ժող. երգ): «Լույսը լուսացավ, բարին շատացավ» (Հ. Թումանյան, «Գութան»): «Ամառվա երկարատև, անտանելի

տոթ օրը նոր էր մրենել» (Նար-Դոս, «Թե ի՛նչ եղավ հետո...»); «Լույսն էր մեռնում, օրը մրնում, Մուրը տնից տուն էլ մտնում...» (Վ. Տերյան, «Անծանոթ աղջկան»); «Ողբ հանկարծ ցրտեց, թիկերի վրայի դեղնած տերևները սկսեցին սվսվալ...» (Վ. Անանյան, «Հովաղաձորի գերիները», IV); «Վերջապես, երբ մուրը լավ մրենեց և ոտքը խաղաղվեց գյուղում, քեռի Սիմոնն ու հայրս... դուրս եկան տնից» (Ստ. Զորյան, «Գանձ»); «Խրիկնանում է օրն աշնան, Իջնում է մուրը կրկին...» (Գ. Սարյան, «Սոնա») և այլն:

Ձի կարելի ժխտել, որ այս դեպքում էլ բայերը իրենց բուն իմաստով ունենում են դիմային կիրառության սահմանափակություն և անհավասարություն (սովորաբար երրորդ դեմքով են արտահայտվում), սակայն չի կարելի նաև անտեսել այն, որ դեմքի քերականական նշանակությունը շատ որոշակի է:

Չենք կարող ասել, թե այս տիպի նախադասությունների մեջ բոլոր դեպքերում վերականգնվում են ճիշտ և ճիշտ այն հնադույն ենթակաները, որոնց բացակայությամբ հետագայում բայ-ստորոգյալները զրկվել են դիմային ցայտուն նշանակությունից, սակայն մի բան պարզ է, որ մեր լեզվում վերոհիշյալ բայերը չնչին բացառությամբ զուգահեռաբար հանդես են գալիս գործողության, եղելության առարկայի և բայական դեմքի որոշակիությամբ՝ համապատասխան ենթակայով նախադասությունների մեջ: Էլ չենք խոսում այն մասին, որ նման բայերով կազմված անենթակա նախադասությունների միտքը մեր լեզվում ազատ կերպով արտահայտվում է նաև այլ միջոցներով և ենթակա ու ստորոգյալ ունեցող նախադասություններով՝ «Լույսը բացվում է», «Մուրն ընկնում է», «Անձրև է գալիս» և այլն⁸: Նման դեպքերում լուսանալ, մրենել, անձրևել և այլ բայերի իմաստները արտահայտվում են նկարագրորեն: Ենթակայի և ստորոգյալի այսպիսի արտահայտումով նշված նախադասությունները ունեն տարբերություններ: Վերցնելով «Որը մրնում է» և «Մուրը ընկնում է» նախադասությունները՝ տեսնում ենք, որ առաջինի մեջ ամբողջովին պահպանված է մրենել բայը (մրնում է), որը համապատասխան ենթակայի մոտ ունի դիմային որոշակիություն, այստեղ եղելությունը որոշակիորեն վերագրվում է համապատասխան առարկային, իսկ երկրորդի մեջ փաստորեն չկա մրնում է բայաձևը, այլ նրա իմաստն արտահայտված է նկարագրորեն՝ բաժանված լինելով մուրը գոյական-ենթակայի և ընկնում է բայ-ստորոգյալի միջև (ճիշտ է, հավասար բաժանում չկա, քանի որ բառական հիմնական իմաստը մուր բառի մեջ է, իսկ ընկնել բառը արտահայտում է նրա փոփոխականությունը, թեև ինքն էլ զուրկ չէ իր իսկ բառական իմաստից): Համեմատյան դեպք, նման կիրառությունների հանդեպ պարզ կերպով տարբերվում է մրնում է բայաձևի միադիմի կիրառությունը: Եվ այսպես էլ պետք է ընդունել մյուսները:

Այս կետում հիշատակված բայերի ուսումնասիրությունն այսպիսով ցույց է տալիս, որ դրանց միադիմի լինելը թեև զուրկ չէ բայական իմաստի հենարանից (բնության երևույթների արտահայտումը), սակայն հիմնականում ունի շարահյուսական-կիրառական պայմանավորվածություն, քանի որ այդ կարգի բայերը շարահյուսական համապատասխան հանգամանքներում կարող են արտահայտվել իրեն որոշակի առարկայի փոփոխական հատկանիշներ՝ իրեն ստորոգյալ որոշակիորեն արտացոլելով երրորդ դեմքը:

2. Միադիմի գործածությամբ մի առանձին խումբ են կազմում բայական

⁸ Համեմատի՛ր՝ Մ. Արեղեան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ 1912, էջ 17, Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1958, էջ 31:

մի շարք յուրահատուկ հարադրություններ, որոնք շարահյուսական կիրառությամբ նույնպես հանդես են գալիս անենթակա նախադասությունների կազմում: Այդ հարադրությունները սովորաբար կազմված են լինում երկու բաղկացուցիչ բառաձևերից, որոնցից մեկը բայ է, իսկ մյուսը՝ գոյական, ըստ որում ծագումնաբանորեն նրանք ունեն ստորոգյալի և ուղիղ խնդրի հարաբերություն: Բայերը, որ ներգործական սեռի են, ժամանակին եղել են մի որևէ հայտնի ենթակայի գործողության արտահայտիչներ և ներգործական սեռի պահանջով ընդունել են ուղիղ խնդիր: Ժամանակին մտածողության փոփոխության հիման վրա նախադասության մեջ գործող կամ եղող առարկայի գաղափարը համապատասխան անվանումով աստիճանաբար մեկուսացվել է և ի վերջո վերացել, այսպիսով քերականական նման կառույցներում մնացել են երբեմնի ստորոգյալն ու ուղիղ խնդիրը, որոնք լեզվամտածողական արդի դրությամբ շատ պարզ կերպով չեն ներկայանում անդամական այդպիսի հստակ տարբերակումով, այլ հանդես են գալիս իրրե իմաստային ներքին կապ ունեցող յուրահատուկ կառույցներ, որոնք պետք է արժեքավորվեն ըստ շարահյուսական կիրառության իրրե անենթակա նախադասություններ, որոնց ստորոգյալը և ուղիղ խնդիրը փաստորեն իմաստային մի միասնություն են կազմում, և բայը (երբեմնի ինքնուրույն ստորոգյալը) արտահայտված է լինում եզակի երրորդ դեմքով: Դրանք միադիմի բայեր են կամ՝ ավելի ճիշտ բայերի միադիմի գործածություններ, կայունացած երբեմնի ուղիղ խնդրով: Այդպիսիները հայերենում շատ չեն: Բայց այդ քչերն էլ ըստ համապատասխան կառույցների արտահայտած իմաստների կարելի է երկու ենթախմբի բաժանել.

ա) Բնության դանազան երևույթներ արտահայտողներ՝ կազմված անել բայի եզակի երրորդ դեմքով և երևույթի այսպես ասած՝ նյութական կողմը ներկայացնող գոյականով, ինչպես՝ ցուրտ է անում, շոգ է անում (հմմտ. «...Թող շոգ անի, որ խաղողը քաղցրանա...» — Վ. Անանյան, «Սևանի ափին», էջ 150), քամի է անում, հով է անում, բուք է անում, ձյուն է անում (հմմտ. Ժող. երգից՝ «Գարուն ա, ձյուն ա արել...») և այլն: Սխալ կլիներ այսպիսի յուրահատուկ կառույցների մեջ ցուրտ, շոգ, փամի, հով, բուք, ձյուն բառերը ընդունել իրրե ենթականեր, դրանք երբեմնի ուղիղ խնդիրներ են՝ արտահայտված հայցական հոլովով: Ուղղականի և հայցականի ձևային նույնությունը տվյալ դեպքում որոշ կասկած է հարուցում, սակայն իրականում այստեղ ուղղական հոլով չկա: Երբեմն խոսակցական լեզվում ոչ ճիշտ կերպով գործածվում են՝ «Այստեղ շատ ցրտեւ են անում» և նման այլ արտահայտություններ: Մեզ թվում է, որ այդ լինում է «ցրտեր են լինում» և նման արտահայտությունների բաղադրությամբ, որտեղ, իհարկե, գործ ունենք ուղղական հոլովով արտահայտված ենթակայի հետ, որին և թվով ու դեմքով համապատասխանում է բայ-ստորոգյալը: Սրանք, անշուշտ, տարբերվում են նաև ցուրտ է, շոգ է և նման այլ կառույցներից, որոնք նույնպես անենթակա միադիմի նախադասություններ են, որտեղ, սակայն, ըստ ծագման ցուրտ, շոգ երբեմնի ենթականեր են՝ արտահայտված ուղղական հոլովով և արդի առումով իրենց երբեմնի բայ-ստորոգյալի հետ (է) իմաստային միասնությամբ են ընդունվում:

բ) Մարդու մարմնի բնախոսական որոշ երևույթներ արտահայտող, ինչպես և ճակատագրին վերաբերող սակավաթիվ կառույցներ, ինչպես՝ սիրտս խառնում է, կողմս ծակում է, քիկունս ծակում է, նրան լավ ապագա է խոստանում (հմմտ. «Օ՜, Լուիզային մեծ ապագա է խոստանում» — Շիրվանզա-

դե, «Արտիստը»): Խառնել, ծախել, խոստանալ բայերը ներգործական սեռի են, սիրտ, կողմ, քիկունք, ապագա գոյական անունները նրանց երբեմնի ուղիղ խնդիրներն են՝ արտահայտված հայցական հոլովով: Բերված յուրահատուկ ան- ենթակա նախադասությունների մեջ նրանք այժմ՝ ընկալվում են իմաստային միասնությամբ: Այսպիսի կառույցների մեջ բայերը միադիմի գործածություն ունեն: Այս կառույցները բոլորովին տարբերվում են կողմ ցավում է, նա մեծ ապագա է խոստանում⁹ կառույցներից, որոնք ունեն ենթակա (կողք, նա) և ինքնուրույն ստորոգյալ, ըստ որում բայ-ստորոգյալները որոշակի-դիմային նշանակություն ունեն: Այստեղից էլ պարզ է, որ վերը նշված բայերի միադիմի գործածությունները պետք է ընդունել միայն ցույց տրված և նրանց տիպի ան- ենթակա կառույցներում:

3. Մի քանի ասացական բայեր կրավորական կիրառությամբ և իմաստային համապատասխան խնդրառությամբ իրեն անենթակա նախադասությունների ստորոգյալներ գործածվելով՝ ներկայանում են որպես միադիմի բայեր: Ինչպես՝ «Այդ մասին շատ է խոսվել», «Այդ խնդրի մասին շարունակ զբվում է», «Դրա մասին անընդհատ ասվել է», «Այդ հարցի մասին հաճախ է հիշատակվում», «Այդ մասին բազմիցս նշվել է» և այլն: Հմտ. «Պատասխանը գրվելու պահին խոսվել է, խորհվել է, կշռադատվել» (Դ. Դեմիրճյան, «Վարդանանք», 1-ին մ.):

4. Մի քանի շեղոք բայեր էլ հատկապես խոսակցական լեզվում կրավորա- կան -վ- ածանց ընդունելով՝ նույն ձևով հանդես են գալիս միադիմի կիրա- ությամբ: Ինչպես՝ «Լեյտենդ չի նստվում», «Քաղաք պիտի գնացվի», «Նոր եկած ձյանը դժվար է նայվում», «Խոնավ սենյակում չի ապրվի» և այլն¹⁰, ճիշտ է, այսպիսի գործածությունները շատ սովորական չեն, սակայն հանդիպելիս շատ բնորոշ կերպով հանդես են բերում քննարկվող քերականական երևույթը:

5. Եղանակավորական և ընդհանուր վիճակային իմաստներ արտահայտող միադիմի ստորոգելիական մի շարք կառույցներ, ինչպես՝ ամոթ է, անկարելի է, անհրաժեշտ է, անհարմար է, բավական է, իզուր է, կարելի է, հայտնի է, հար- կավոր է, հարմար է, հնարավոր է, պարզ է, պետք է և այլն, որոնք կազմված են որևէ ածականից, գոյականից, մակրայից և եմ բայի (երբեմն լինել բայի փո- խարինումով) եզակի երրորդ դեմքից՝ իմաստային ներքին որոշ միասնու- թյամբ: Հայտնի է, որ ժամանակակից ռուսերենի քերականագիտության մեջ այժմ այս տիպի արտահայտությունների համապատասխան իմաստները դըր- սնորոգ բառերը ճիշտ կերպով դասվում են եղանակավորող բառերի և категория состояния-ի մեջ: Հայերենում յուրահատուկն այն է, որ սրանց կազմության մեջ եզակի երրորդ դեմքով հանդես եկող «է» բայի նշանակու- թյունը լիովին մթազնված է: Այնպես որ ամբողջ կառույցի մեջ բայական իմաստը դեռ կա: Այդ պատճառով էլ դրանք համարում ենք միադիմի յուրահա- տուկ կառույցներ:

6. Միադիմի գործածությամբ հանդես եկող վերը հիշատակված խմբերի բայերից իրենց շարահյուսական կիրառությամբ և մանավանդ դիմային նշա- նակությամբ առանձնանում են մի շարք այնպիսի բայեր, որոնք եզակի երրորդ դեմքով բարդ ստորադասական նախադասության կազմում ենթակա չունեցող

⁹ Հմտ. Շիրվանզադե, Սկզբունքի մարդը:

¹⁰ Նայել և ապրել բայերը կրկնաբեռ են: Այստեղ գործածված ձևերը ածանցված են ոչ թե նրանց ներգործական, այլ շեղոք կոդից:

գլխավոր նախադասության ստորոգյալի դեր են կատարում: Այդպիսի գլխավոր նախադասությունները բնորոշ են նրանով, որ նրանց մեջ անմիջականորեն նշված չի լինում միադիմի բայ-ստորոգյալով արտահայտվող գործողության կամ եղելության տերը՝ ենթական. այն դրսևորվում է գլխավոր նախադասությանը ստորադասվող մի ամբողջական երկրորդական նախադասությամբ (ենթական երկրորդական նախադասություն): Այդ նշանակում է, որ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալի դեմքի բովանդակությունը կապվում է երկրորդական նախադասության հետ: Եթե պայմանականորեն գլխավոր նախադասությունը անջատենք երկրորդականից, ապա նրա բայ-ստորոգյալը իր դիմային նշանակությամբ ու բնույթով կնույնանա վերոհիշյալ խմբերում նշված միադիմի բայերին, բայց քանի որ այն առնվում է բարդ նախադասության ամբողջության մեջ՝ երկրորդականի հետ, միադիմի բայ-ստորոգյալի քերականական ձևը թեև մնում է միադիմի, սակայն դիմային նշանակությունը զգալի չափով որոշակի է դառնում: Այդ պատճառով էլ բայերի այդպիսի կիրառությունների մեջ միադիմությունը նախորդ խմբերի հանդեպ պետք է ընդունել պայմանականորեն: Գլխավոր նախադասության ստորոգյալի դեր կատարող պայմանական միադիմի բայերը կարելի է խմբավորել հետևյալ ենթատեսակներով.

ա) Չեզոք սեռի մի քանի ձույլ կազմության բայեր, ինչպես՝ երևալ, թվալ լինել, հետևել, մնալ, պատահել: Օրինակներ. «Երևում էր, որ ձիավորն անհամբերությամբ շտապում էր մի մտադրյալ նպատակի ժամ առաջ հասնելու» (Պ. Պոռյան, «Հացի խնդիր», Ա): «Երևում է՝ վաղուց են սկսել դրել ...» (Ավ. Իսահակյան, «Հուշեր»): «Երևում էր, որ կայարանը միայն այս գնացքաշարը չի ընդունել» (Հր. Քոչար, «Մեծ տան զավակները», I գ., 1-ին մ., VII): «Նրանք վում էր, թե այդ գիշերը չի լուսացնի...» (Նար-Դոս, «Հոգուն վրա հասավ»): «Թվաց, թե ձյունի ծանրոցից մի ճյուղ ջարդվեց» (Ա. Բակունց, «Մթնաձոր»): «Ղազարյանին թվաց, որ այդ մարդն ազդում է ընդհանուր պատկառանք» (Ն. Ջարյան, «Հացավան», VII): «Եղավ, որ տարիներ հետո, թշնամին խուժեց այդ քաղաքը» (Ավ. Իսահակյան, «Մեծ ճշմարտությունը»): «Ինչ րավ կլինե՞ր, եթե նրանք գյուղում մնային» (Ա. Բակունց, «Մինա բիրին»): «Պատահում էր, որ նրա հետ վիճում էր Շուշանիկը...» (Շիրվանզադե, «Քառս», 2-րդ մ., IV): «Բայց պատահում է, և շատ է պատահում վերջին տարիները, որ (նա) գիշերն ուշ է քնում և առավոտյան ուշ զարթնում...» (Ն. Ջարյան, «Հացավան», I): «Դրանից հետևում էր, որ խնդիրը ճիշտ լուծում է ստանալու»: «Ամեն ինչ արդեն նախապատրաստված էր. մնում էր, որ վերցնեինք ճամպուրակներն ու ճանապարհվեինք» և այլն:

բ) Հարադրական կազմություն ունեցող մի-երկու չեզոք բայեր, ինչպես՝ դուր գալ, դուրս գալ կամ բանից դուրս գալ: Օրինակներ. «Նրան դուր չեկավ, որ Անժիկը սպիտակ, մաքուր թաշկինակ ունի» (Ա. Բակունց, «Մինա բիրին»): «Տիգրանին դուր էր գալիս մանավանդ, որ վիթխարահասակ, փքուն այտերով, մեծ ձեռքերով, հաստ մատներով այդ մարդը... երբեք ձայնը չէր բարձրացնում ոչ հավասարների հետ վիճելիս և ոչ էլ ստորադրյալներին դիտողություն անելու ժամանակ» (Հր. Քոչար, «Մեծ տան զավակները», I գ., 1-ին մ., I): «— Ուրեմն, ընկեր լևոն, քո ասելով էլ դուրս է գալիս, որ ես փախչում եմ ֆրոնտից, էլի՞», — հարցրեց Քեռի Ղուկասը կոտրված եղանակով» (Ն. Ջարյան, «Հացավան», VI): «— Բանից դուրս եկավ, — շարունակում էր լևոնը նույն մտերմական ժպտով, —

որ մեր կոլիսոզնիկներն ավելի լավ են, քան իրենք էին կարծում» (նույն տեղ, VII):

դ) Կրավորական սեռով արտահայտված մի քանի ասացական և իմացական բայաձևեր, ինչպես՝ ասվել, ենթադրվել, կարծվել, պարզվել և այլն: Օրինակներ. «Պարզվեց, որ ներքնահարկում պահվող ոսկով լի տոպրակներն անգործ մարդկանց վառ երևակայության ծնունդն են եղել» (Շիրվանզադե, «Քաոս», 1-ին մ., II): «Հետագայում պարզվեց, որ այդ գրախոսը հայ անվանի վիպասաններից մեկն է...» (Ստ. Զորյան, «Հուշերի գիրք», էջ 165): «Մի ժամանակ ենթադրվում էր, որ Մարսի վրա բնակչություն կա»: «Կարծվում է, թե քաղցկեղը վարակիչ է» և այլն:

դ) Այսպիսի կիրառությամբ հանդես են գալիս նաև եղանակավորական և ընդհանուր վիճակային իմաստներ արտահայտող ստորոգելիական յուրահատուկ միադիմի կառույցները՝ ստանձնելով գլխավոր նախադասության ստորոգյալի պաշտոնը: Միադիմի ստորոգելիական կառույցը գլխավոր նախադասության մեջ արտահայտվելով առանց ենթակայի՝ դիմային նշանակություն է ստանում ենթակա երկրորդական նախադասությամբ: Օրինակներ. «Անկարելի էր, որ այդ դեպքը շուրջը նրա պատվասիրությունը» (Մուրացան, «Առաքյալը», ԺԴ): «Պարզ էր, որ Սուլյանը չէր նրա դժկամության պատճառը» (Շիրվանզադե, «Քաոս», 2-րդ մ., IV): «...Ինձ համար պարզ էր, որ Ռոմանոսը — հնչյունների այդ վարպետը — ամեն տեղ հնչյուններ էր որոնում...» (Ստ. Զորյան, «Հուշերի գիրք», էջ 311): «...Բավական եղավ, որ նա արտասանի այս խոսքերը...» (նույն տեղ, էջ 100): «Իզուր չէ, որ գյուղում եթե մեկը լավ աշխատող է, ասում են՝ — Զորբա Օսեփի ճանկն ընկնի, մի շաբաթ էլ չի դիմանա» (Ա. Բակունց, «Զորբան»): «Կարելի է, որ ընկեր Լևոնը բացատրի բջջի դռնփակ ժողովին, թե ի՛նչ է նշանակում...» (Ն. Զորյան, «Հացավան», VI): «Եթե վեներայի վրա գոյություն ունի մթնոլորտ, — դատում էր Լոմոնոսովը, — ապա հնարավոր է, որ այնտեղ կա կյանք...» (Ա. Ա. Յակովլևի, «Երկրի կյանքը», էջ 52) և այլն:

Եթե գլխավոր նախադասության կազմում հանգես եկող միադիմի բայի դիմային նշանակությունը պարզ է դառնում երկրորդական նախադասության շնորհիվ, վերջինիս ենթակայական բնույթով, ապա դրությունը բոլորովին փոխվում է հենց այդպիսի բայերի միջանկյալ կիրառությունների դեպքում, երբ դրանք քերականական հաստատուն կապ չեն ունենում հիմնական միտքն արտահայտող նախադասության հետ, բայց ներդրվելով նրա մեջ՝ որոշ լրացուցիչ երանգ են հաղորդում արտահայտվող մտքին: Օրինակ՝ «Սակայն, ինչպես հետո պարզվեց, այդ տասը կոպեկը գրպանից հանել էր կինը...» (Ստ. Զորյան, «Ժամկոչ Անտոն», II): «Փոքրիկ քաղաքը, ինչպես երևում էր, քնել էր վաղուց» (նույն տեղ, III): «Ժամանակն անցնում է լուռության մեջ, և լուռությունը, քվում է, հոսում է» (նույնը, «Զմռան գիշեր»): «Իսկ նունուֆարը, քվում էր, ավելի էր վատացել» (նույնը, «Խնձորի այգին», V): «Իմ հարցը, երևում է, հուզեց Թորոսյանին» («Ս. Հայաստան», № 11755): «Ներկայացումը, պատահում է, սկսվում է ուշ և ուշ էլ վերջանում...» («Երևան», № 515) և այլն:

Առանձնապես կարևոր է նկատել ունենալ, որ բայերի այսպիսի միադիմի կիրառությունները սերտորեն կապված են իմաստային հանգամանքների հետ: Բայերը միադիմի կիրառությամբ երբեմն բացահայտ, երբեմն էլ շատ թույլ իմաստային յուրահատուկ երանգավորումով որոշ տարբերակում են ունենում,

առանձնանում են իրենց համապատասխան բառույթի դիմային շղթայից և ներկայանում քերականական առանձնահատուկ հատկանիշով՝ ատարվում է իմաստային ներքին մասնակի երկփեղկում, և միադիմի կիրառությունը հենվում է տարրերակվող իմաստի վրա: Նվե խորամուխ լինենք փաստերի մեջ, ապա ժամանակակից հայերենում կարող ենք մատնացույց անել եթե ոչ նշված բոլոր բայերի, դոնե նրանցից մի քանիսի իմաստային այդպիսի տարրերակումներն ու երանգավորումները: Այդ նպատակով ստորև կրերենք մի քանի օրինակներ՝ բայերի այնպիսի իմաստներով, որոնց նկատմամբ այս կամ այն չափով իմաստային տարրերություն են հանդես բերում վերը ցույց տրված համապատասխան բառակերպերը: «Ինչու՞ մի տասը տարի առաջ չպատահեցի մի այդպիսի աղջկա» (Շիրվանզադե, «Քաոս», 3-րդ մ., V): «Իսկ հեռավոր լույսի մեջ պարզվում է հեզ ու հպարտ կերպարանքը...» (նույն տեղ, 3-րդ մ., VII): «Ամեն օր պատահում եմ նրան» (Մ. Մանվելյան, «Սպիտակ ծաղիկներ»): «...Որսորդությունը քեզ համար դաժան բան չի՞ րվում...» (Ստ. Զորյան, «Հուշերի գիրք», էջ 316): «Աշխարհն ինչ մեծ քվաց նրա համար...» (Ա. Բակունց, «Արարում», 2): «Ամպերը մեկ էլ ետ քաշվեցին, դարնան արևը երևաց ամպի տակից...» (նույնը, «Այու սարի լանջին»): «Մի անգամ է՛ր եղել այնտեղ, երազի պես է՛ր հիշում քաղաքը» (նույն տեղ): «Նա շտապով հագավ շորերը և դուրս եկավ տնից» (Ն. Զարյան, «Հացավան», VI): «Ամպերը ձեղքվել էին իրարից և բաց արել կապույտի մի ընդարձակ շերտ: Պարզվել էր Սպիտակի գագաթը» (նույն տեղ, IX): «—Ուրախ մարդ եմ երևում,— նկատեց Արգամի հայրը...» (Հր. Քոչար, «Մեծ տան զավակները», I գ. 1-ին մ., III) և այլն:

Միանգամայն ակներև է, որ ընդգծված բայաձևերը սովորական դիմավոր ձևեր են՝ դիմային շատ որոշակի նշանակությամբ: Սակայն սրանով չի ժխտվում այն իրողությունը, որ նույն այս բայերը ստանում են միադիմի կիրառություններ, ինչպես ցույց է տրված վերը բերված օրինակներում: Ընդհակառակն, սրանց համեմատությամբ ավելի է ընդգծվում միադիմի կիրառությունների յուրահատկությունը: Բանն այն է, որ բացի շարահյուսական-կիրառական տարրերություններից, իրենց միադիմի հանդես եկած և այս որոշակի դիմավոր բայերը ներկայացնում են նաև բառիմաստի որոշ տարրերություններ: Այսպես, դուրս գալ բերված որոշակի-դիմավոր ձևում նշանակում է «մի տեղից՝ ելնել» («Նա դուրս եկավ տանից»), իսկ միադիմի ձևում՝ «հետևություն առաջ դալ, եզրակացություն ստացվել», երևալ՝ «տեսանելի դառնալ, հայտնվել և այլն», միադիմի ձևում՝ «իրեն կարծիք, ենթադրություն կամ հաստատ համոզմունք ներկայանալ», լինել՝ «այցելել և որոշ ժամանակ մնալ» (ըստ մեր օրինակի) և «ընդհանրապես պատահել» (միադիմի կիրառությամբ), պատահել՝ «հանդիպել» և «պատահարար լինել, երբեմն լինել», պարզվել՝ «մոայությունից՝ անմաքրությունից՝ ամպամածությունից ազատվել, իր հստակ տեսքով երևալ» և «եզրակացվել» և այլն: Վերջին օրինակներում երևալ բայը բերված է նաև իրեն հանգույց («...Ուրախ մարդ եք երևում»), իսկ քվալ բայը՝ միայն այդ գերով: Ծիշտ է, սրանք իրեն հանգույցներ հանդես են գալիս իմաստի վերացականությամբ, սակայն այդ գեպրում դիմային որոշակի նշանակությունը պահպանվում է:

Պետք է ասել, որ միադիմի կիրառություններով հանդես եկող բայերից մի քանիսի մեջ նկատվում է, որ իմաստային երանգավորումը տարվում է սուբյեկտիվ վերաբերմունքի որոշ երանգի արտահայտման ուղղությամբ:

Բայց և չի կարելի մոռանալ, որ մեր լեզվում այս կարգի բայերի միադիմի կիրառությունների մեջ բառիմաստի տարբերակումներն ու երանգավորումները այնպիսի խորություն չունեն, որ այդ ճանապարհով առաջ բերեն բոլորովին նոր բառեր, իրեն նույնանուն մյուսների: Այդ տարբերությունները դեռ մնում են բառական իմաստային առումների սահմաններում, ուստի և նրանց միադիմի կիրառություններն էլ մնում են իրեն դիմային քերականական գործածության յուրահատուկ առումներ:

Պետք է նկատի ունենալ նաև, որ առանձին պայմանական միադիմի բայեր էլ իրենց համապատասխան որոշակի-դիմային ձևի հանդեպ բառական իմաստի և ոչ մի տարբերություն հանդես չեն բերում: Հմմտ. «Այդ հայացքն ինձ դուր է, զալիս» (Ստ. Զորյան, «Հուշերի գիրք», էջ 107) և «Ինձ դուր է զալիս, երբ մարդիկ անկեղծ են խոսում»: Դուր գալ հարադրական բայը երկու դեպքում էլ նույն բառական իմաստն ունի, սակայն դիմային նշանակության տեսակետից նույնպիսի բացարձակ նույնություն չունի, վերջին նախադասությունների մեջ միադիմի կիրառությամբ է: Այն, որ նրա ենթական արտահայտված է երկրորդական նախադասությամբ, առաջինի համեմատությամբ թուլացրել է դիմային նշանակությունը: Բառական իմաստի այսպիսի բացարձակ նույնությունն պայմաններում դիմային նշանակության տարբերության որոշման համար, ինչպես տեսնում ենք, մնում է միայն շարահյուսական կիրառությունը:

Ըստ կիրառությունների բերված փաստերից պարզ երևում է քննարկվող դիմային նշանակության տատանողական բնույթը: Եթե երկրորդական նախադասություններից անկախ դիմային նշանակությունը հանդես է գալիս իրեն հեռավոր ակնարկ, ապա երկրորդական նախադասության հաշվառումով այն շոշափելի է դառնում, սակայն ոչ այնպիսի հստակությամբ, ինչպես որոշակի-դիմային կիրառությամբ է:

Ուրեմն ժամանակակից հայերենի փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

1. Բայերի դիմային ձևերի գործածությունների մեջ դիմային սահմանափակության ու անհավասարության իրողություններից տարբերվում է քերականական այն իրողությունը, երբ բայը եղակի երրորդ դեմքի ձևավորումով առանձնակի գործածություն է ստանում՝ արտահայտելով այնպիսի գործողության, եղելության կամ դրության գաղափար, որի ենթական չկա: Այդպիսի բայաձևերի մեջ դեմքի քերականական կարգը բացահայտորեն ձևային է, նրա նշանակությունը միայն հեռավոր ակնարկային է, խիստ տարտամ: Դրանց դիմային ձևի ու նշանակության միջև չկա լրիվ համապատասխանություն. դրանք իրոք միադիմի են ըստ ձևային հատկանիշի, իսկ ըստ դիմային նշանակության՝ շատ նվազ չափով:

2. Ժամանակակից դրական հայերենի բայական համակարգի այնպիսի դրության պայմաններում, երբ առկա են միմյանցից շատ որոշակիորեն սահմանադժվող դիմային և դերայական ձևերը, միադիմի բայաձևերը դիմային հատկանիշի տեսակետից չենք կարող դասել դերայաների շարքը, որտեղ կա բացարձակ դիմադրելություն՝ թե՛ ըստ ձևի և թե՛ ըստ նշանակության: Իրենց դիմային հատկանիշներով միադիմի կոչվող բայաձևերը ավելի մոտ են կանգնած բուն դիմավոր ձևերին, քան դերայաներին. խոնարհված վերլուծական ձևերում միադիմի բայաձևերը իրենց կազմում ունենում են այս կամ այն դերայա՝

որը առանց դիմային (և էլի ուրիշ) հատկանիշի պարունակվում է տվյալ ձևի մեջ:

3. Ժամանակակից գրական հայերենում միադիմի բայաձևերը, բայական արտահայտությունները առավելապես շարահյուսական-կիրառական հիմունք ունեն. երբեմն բառական իմաստի որոշ երանգավորումով, իսկ երբեմն էլ առանց դրան՝ սոսկ քերականական-կիրառական յուրահատուկ հատկանիշներով բուն դիմային ձևերի հանդեպ դեմքի կիրառության մեջ գծագրվում են առանձին միադիմի առումով: Այդուհանդերձ՝ դրանք գերազանցապես մնում են իրենց բայական հիմնական բառայինների բառական շրջանակների մեջ՝ իբրև քերականական-իմաստային առումներ:

4. Ժամանակակից հայերենում բայերի միադիմի դործածությունները հանդես են գալիս հայտնի պայմանականությամբ, որն արտահայտվում է ենթակայի բացակայությամբ (ոչ զեղչումով), ինչպես նաև բայի սեռով, իմաստային երանգով, շարահյուսական կառույցի բաղկացուցիչ մասերի իմաստային ներքին կապով և այլն: Առանց նման յուրահատուկ պայմանների, որոնք այս կամ այն չափով հիմք են դառնում միադիմի գործածությունների, բայը հանդես է գալիս բուն դիմային նշանակությամբ: Այդ են ցույց տալիս կիրառական կոնկրետ զուգադրությունները:

5. Բայերի միադիմի գործածությունները ընդհանուր լինելով եզակի երրորդ դեմքի ձևային հատկանիշով և նշանակության ակնարկայնությամբ, բավական բազմազան են իրենց կազմության, բառական իմաստի, սեռի հատկանիշներով. դրանց հիման վրա էլ ներկայանում են տարբեր խմբավորումներով: Առանձնապես ուշադրության արժանի է այն, որ դրանք մեծ մասամբ անանցողական բայեր են լինում (չեզոք և կրավորական սեռի). չնչին տեղ են գրավում ներգործական բայերի կիրառությունները: Դա բացատրվում է նրանով, որ ակտիվ գործողությունը միշտ էլ ուղեկցվում է հայտնի ենթակայով, ուստի և դեմքի որոշակիությամբ:

6. Միադիմությունը իբրև քերականական երևույթ կապված է մարդկային մտածողության ու պատկերացումների որոշ շրջանի հետ: Միադիմի որոշ ձևեր գալիս են հնից, սակայն շատերն էլ նմանակային համեմատաբար նոր կազմություններ են, նոր բայաձևերի միադիմի կիրառություններ: Լեզվամտածողական արդի դրությամբ ժամանակակից հայերենը թեև լիովին չի մերժում բայերի միադիմի գործածությունները, սակայն բացահայտորեն առավելություն է տալիս հենց նույն բայերի բուն դիմային գործածություններին: